ՄՄԿ Մեկնաբանություն 31
Հասույթ. բարտերային գործարքներ, որոնք ներառում են գովազդային ծառայություններ

Հղումներ

- ՀՀՄՍ 8 *Հաշվապահական հաշվառման քաղաքականություն, փոփոխություններ հաշվապահական հաշվառման գնահատումներում և սխալներ*
- ՀՀՄՍ 18 *Հասույթ*

Հարցադրում

1 Կազմակերպությունը (Վաճառող) կարող է կնքել գովազդային ծառայություններ մատուցելու և դրա դիմաց հաճախորդից (Հաճախորդ) գովազդային ծառայություններ ստանալու բարտերային գործարք: Գովազդերը կարող են տեղադրվել ինտերնետում կամ ցուցանակների վրա, հեռարձակվել հեռուստատեսությամբ կամ ռադիոյով, տպագրվել թերթերում կամ ամսագրերում, իրականացվել այլ միջոցներով:

2 Երբեմն կազմակերպությունների միջև դրամական միջոցների կամ այլ հատուցման փոխանակում տեղի չի ունենում: Որոշ այլ դեպքերում տեղի է ունենում հավասար կամ գրեթե հավասար չափով դրամական միջոցների կամ այլ հատուցման փոխանակում:

3 Վաճառողը, որն իր սովորական գործունեության ընթացքում մատուցում է գովազդային ծառայություններ, գովազդ ներառող բարտերային գործարքից ճանաչում է հասույթ՝ ըստ ՀՀՄՍ 18-ի, այն ժամանակ, երբ, այլ չափանիշների հետ մեկտեղ, փոխանակվող ծառայությունները տարաբնույթ են (ՀՀՄՍ 18.12) և հասույթի գումարը կարող է արժանահավատորեն չափվել (ՀՀՄՍ 18.12(ա)): Սույն Մեկնաբանությունը կիրառվում է միայն տարաբնույթ գովազդային ծառայությունների փոխանակման դեպքում: Համանման գովազդային ծառայությունների փոխանակումը՝ ըստ ՖՀՄՍ 18-ի, հասույթ առաջացնող գործարք չէ:

4 Խնդիրն այն է, թե ինչ հանգամանքներում Վաճառողը կարող է արժանահավատորեն չափել հասույթը՝ բարտերային գործարքում ստացված կամ մատուցված գովազդային ծառայությունների իրական արժեքով:

Փոխհամաձայնություն

5 Գովազդ ներառող բարտերային գործարքից հասույթը չի կարող արժանահավատորեն չափվել ստացված գովազդային ծառայությունների իրական արժեքով: Այնուամենայնիվ Վաճառողը կարող է արժանահավատորեն հասույթն չափել բարտերային գործարքում իր կողմից մատուցվող գովազդային ծառայությունների իրական արժեքով՝ անդրադառնալով միայն այն ոչ բարտերային գործարքներին, որոնք՝

(ա) ներառում են բարտերային գործարքի գովազդին համանման գովազդ.

(բ) հաճախ են տեղի ունենում.

(գ) ներկայացնում են գործարքների քանակի և գումարի գերակշռող մասը՝ համեմատած բոլոր այն գովազդների հետ, որոնք համանման են բարտերային գործարքի գովազդին.

(դ) ներառում են դրամական միջոցներով և/կամ արժանահավատորեն չափելի իրական արժեք ունեցող այլ ձևով հատուցում (օրինակ՝ շուկայում ազատ շրջանառվող արժեթղթեր, ոչ դրամային ակտիվներ և այլ ծառայություններ).

(ե) չեն ներառում նույն պայմանագրային կողմը, ինչ բարտերային գործարքում:

Փոխհամաձայնության ամսաթիվը

2001 թ. մայիս

Ուժի մեջ մտնելը

Սույն մեկնաբանությունը ուժի մեջ է մտնում 2001 թ. դեկտեմբերի 31-ին: Հաշվապահական հաշվառման քաղաքականության փոփոխությունները պետք է հաշվառվեն ՀՀՄՍ 8-ի համաձայն: